

արհամարհանք պիտի գտնես, երկինք աչքերդ պիտի դարձնես՝ նա կայծակ եւ կարկուտ քեզի պիտի տեղայ, քու զաւկներդ նաեւ շատ անգամ եղբայրասպան՝ իրենց մօր սիրտը պիտի վիրաւորեն»:

Ձեռքերը ծալած փայտ կտրեր մնացեր էր Յովնան, կը նայէր, այդ կը նկան երեսին գոյնին, կը նայէր աչքերուն մարմուռկին եւ վերջը արցունքներուն, կը լսէր այդ անսովոր ձայնը, կը խորհրդածէր ինքնիրեն եւ կ'ըսէր. «Այդ կինը եթէ դերասան էլ է, շատ լաւ կը խաղա իւր դերը, ես յոյն թատերականաց մէջ նաեւ այդպիսի մը չեմ տեսած. եթէ ըսածները ճշմարիտ են. վա՛յ է մեզի, վա՛յ մեր հայ ազգին. ի՞նչ ապացոյց կրնայ տալ իւր գուշակութեանց ճշգրտութեան այդ անսովոր մարգարէուհին»: Այս միջոցին քրմուհին գլուխը կուրծքին վրայ իբրեւ թէ խոր քուն էր, սրինգներն իրենց տխուր երաժշտութիւնը դարձեալ կը շարունակէին, երբ յանկարծ ցնցուեցաւ նա եւ եռոտանին սարսեցաւ, աչքերը բացուեցան լի տխուր սրտմտութեամբ եւ ցուցամատը կարկառ դեպ Յովնան. «Ո՛վ դո՛ւ, գոչից, ապացոյց կ'ուզես դու, սպասէ՛, լսէ ինչ որ Արտեմիս անցեալ մը իմ աչացս առաջ կը բերէ ի հանդէս: Կը տեսնեմ սիրուն պատանեակ հազիւ արբունքի հասեալ, եռանդուն, ա՛յ, հուր է դորայ բնութիւն եւ սիրտը սիրոյն բոցով է շրջապատ եալ իբրեւ լուսինը բակով: Բայց ի՞նչ յիմարութիւն լեռնցի, խեղճ խութեցի, ո՞ւր աչքերդ կը բարձրացնես, ո՞ւր յոյսերդ կ'ամբառնաս, թագադիր իշխանազանց օրհորդին դու կը համարձակիս այդ տոչորեալ սիրտդ մերկացներ:

Յովնան այս վերջին խօսքերուն այնպէս սաստիկ ցնցուեցաւ իբրեւ թէ իժ մը զինք խածներ, եւ դեպի մուտքը նտայեցաւ, որ չէր երեւեր:

«Ո՛ւր կը նայիս, ո՛ւր կ'ուզես փախչիլ, կը կրկներ քրմուհին, ապացոյց կ'ուզէիր. յիշէ՛ գիշերները՝ լուսնին գարնան գեղեցիկ գիշերը, այն վարդենեաց պարտեզը ուր փոքրիկ բանալի մը ձեռքդ պողոտջուն կը մտնէիր, այդ սիրոյ առաջին գիշերը որու քաղցրութեան չի կայ թան մը աշխարհիս վրայ, որ կարենայ բաղդատուիլ. երբ տիրած անձի բերն են կը լսէ ոք սիրեմ բառը, եւ որ քեզ համար դառն եւ բազմաչարչար կենաց պատճառ պիտի լինէր. այո՛, այդ առաջին